ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«27» օգոստոսի 2024թ. ՆՄՈ/411-Ա

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան և Գետաշեն բնակավայրերում սուբվենցիոն ծրագրով իրականացվող խմելու ջրամատակարարման ցանցի կատուցման աշխատանքների, քաղաքաշինական գործունեության մշտադիտարկում իրականացնելու նպատակով.

Որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Խորեն Սարուխանյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ճարտարագետ-շինարար Ռաֆիկ Երվանդյանին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ոլորտային պատասխանատուներին՝ կոմունալ տնտեսության համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժնի պետ Արմեն Մխիթարյանին, նույն բաժնի առաջատար մասնագետ Հարություն

Մարգարյանին, առաջատար կարգի մասնագետ Հայկ Մկրտումյանին, մշտադիտարկում իրականացվող բնակավայրերի վարչական ղեկավարներին (համաձայնությամբ):

3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Խորեն Սարուխանյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 5-օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ՝ Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2024 թվականի մարտի-ի 27-ի
N ՄՈ/411-Ա որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետի աշխատակազմի
Քաղաքաշինության, հողաշինության
և ենթակառուցվածքների կառավարման վարչության
պետի պարտականությունները կատարող՝ Խորեն Սարուխանյան

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի
Քաղաքաշինության, հողաշինության և
ենթակառուցվածքների կառավարման վարչության
գլխավոր ճարտարագետ-շինարար Ռաֆիկ Երվանդյան

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝ ***Դ. Դավթյան***